

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պատմաբանի առաջնահերթ պարտականությունն է ցանկացած գնով բացահայտել, թե ինչ է կատարվել իրականում:

*Ռորին Քոլլինզվուդ*

*Բանալի բառեր – նոր պատմություն, պարբերացում, ժամանակակից պատմագիտություն, կացութաձևային մոտեցում, քաղաքակրթությունների տեսություն, տեխնոգենային քաղաքակրթություն, աշխարհաքաղաքականություն, նոր ժամանակ, ժամանակակից պատմություն*

«Նոր ժամանակ» կամ «նոր պատմություն» հասկացությունը եվրոպական պատմական մտքում երևան եկավ Վերածննդի դարաշրջանում: XV-XVI դարերում իտալական հումանիստներն առաջին անգամ ձևակերպեցին միջնադար (medium oevum) հասկացությունը ի հակադրություն անտիկ (antiquitas) դարաշրջանի և առաջ քաշեցին նոր ժամանակի սկզբնավորման մասին գաղափարը: Նրանք պատմության պարբերացման նոր գաղափարի սկիզբ դրեցին, որով համաշխարհային պատմությունն ընկալում էին երեք մեծ փուլերի տեսքով՝ անտիկ, միջնադար և նոր ժամանակ: Լեոնարդո Բրունին և Լորենցո Վալլան իրենց աշխատություններում<sup>1</sup> պատմական նոր ժամանակի սկիզբը համարում էին Հռոմեական կայսրության անկումը, իսկ միջնադարն առանձնացնում որպես հատուկ դարաշրջան<sup>2</sup>:

XVI դարում Ժան Բոդենը «Պատմության ուսումնասիրության հեշտ մեթոդ» աշխատությունում<sup>3</sup>, հակադրվելով Նիկոլո Մաքիավելլո՝ պատմության փուլայնության ու Ֆրանչեսկո Գվիչարդինի՝ պատմական հոռետեսության գաղափարին, իր ապրած ժամանակն անվանեց նոր ժամանակ<sup>4</sup>: Քրիստոֆ Քելլերը 1702 թ. հրատարակած «Բազմակողմ պատմություն» (Historia

<sup>1</sup> Տե՛ս **Bruni L.**, *Historium Florentiti populi*, Bologna, 1926, *idem*: *Comentarius rerum suo tempore gestarum*. Bologna, 1926, **Valla L.**, *De Falso credita et ementita Constantini donatione declamentio*, 151, *idem*: *The Treatise of L. Valla on the Donation of Constantine*, Oxford, 1922:

<sup>2</sup> Տե՛ս **Корелин М. С.**, *Ранний итальянский гуманизм и его историография*. Критическое исследование, т. 4, СПб., 1914, **Хоментовская А. И.**, *Лоренцо Валла-великий итальянский гуманист*. М., Л., 1964:

<sup>3</sup> Տե՛ս **Боден Ж.**, *Метод легкого познания истории*, пер. с лат. М. С. Бомковой, М., 2000:

<sup>4</sup> Տե՛ս **Бобкова М. С.**, *Жан Боден о предмете истории // Диалог со временем*. Альманах интеллектуальной истории, вып. 2, М., 2000, с. 192-209:

Universalis) աշխատությունում նոր ժամանակների սկիզբը համարում էր 1453 թ. Կոստանդնուպոլսի անկումը<sup>1</sup>: Համաշխարհային պատմության այս պարբերացումը չդարձավ տիրապետող արևմտավրոպական պատմական գիտությունում: XVIII դարում Ջամբաստիստա Վիկոն առաջ քաշեց հասարակության փուլային զարգացման տեսությունը, ըստ որի՝ մարդկությունը բարբարոսությունից դեպի քաղաքակրթություն անցել է պատմական երեք փուլով՝ հնագույն ժամանակներից մինչև Հռոմի անկումը (աստվածային դարաշրջան), մութ դարերի կամ միջնադարի «նոր բարբարոսություն» (հերոսական դարաշրջան) և լուսավորություն (մարդկային դարաշրջան)<sup>2</sup>:

XIX դարի սկզբում Գ. Հեգելը համաշխարհային պատմությունը ներկայացնում էր որպես ինքնազարգացող սկզբնական համաշխարհային ոգի, որի նոր ժամանակի (Die neue Zeit) սկիզբը Ռեֆորմացիան է<sup>3</sup>: Այս մոտեցումը պաշտպանում էր նաև Ն. Ի. Կարենը՝ նոր ժամանակի տևողությունը հասցնելով մինչև 1914 թ.՝ Առաջին աշխարհամարտի սկիզբը<sup>4</sup>: XIX դարում ամերիկյան պատմագրությունում նոր ժամանակի սկիզբը համարում էին աշխարհագրական մեծ հայտնագործությունները: Լ. Ի. Մեչնիկովը համաշխարհային պատմությունը բաժանում է երեք հաջորդական՝ գետային, միջերկրածովային և օվկիանոսային քաղաքակրթություններ ընդգրկող դարաշրջանների: Վերջինս բնութագրական է XV-XVI դարերի աշխարհագրական մեծ հայտնագործությունների շնորհիվ առաջ եկած նոր ժամանակին, որի ընթացքում ձևավորված համաշխարհային քաղաքակրթությունն ընդգրկում է ոչ միայն Եվրոպայի, այլև Ամերիկայի և Ավստրալիայի ժողովուրդներին<sup>5</sup>:

Ռուլան Մունյեն «XVI-XVII դարեր: Եվրոպական քաղաքակրթության առաջընթացը և Արևելքի անկումը (1492-1715)» ուսումնասիրությունում<sup>6</sup> եվրոպական քաղաքակրթության նոր ժամանակի (նոր պատմության) սկզբնավորումը նույնպես համարում է ամերիկյան մայրցամաքի հայտնագործումը:

«Նոր ժամանակ» հասկացությունը թեպետ պատմաբանների կողմից ընդունվեց և գիտական շրջանառության մեջ դրվեց, այնուամենայնիվ նրա իմաստը շատ առումներով մնաց պայմանական: Դրա պատճառն ամենից առաջ այն է, որ տարբեր մայրցամաքներում ապրող ժողովուրդները միաժամանակ չթևակոխեցին նոր դարաշրջանը: Նոր ժամանակի սկիզբն ամեննին նույնը չէ Եվրոպայի, Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի ժողովուրդների համար, որոնք տարբեր քաղաքակրթության կրողներ են և տարբեր պատմական

<sup>1</sup> Տե՛ս **Макаров Г. К.**, Кристофор Целлариус // Наука и жизнь, 1934, январь (№ 1):

<sup>2</sup> Տե՛ս **Антисери Д. Реале Дж.**, Западная философия от истоков до нашей дней, т. 3. От Возрождения до Канта, под ред. и в переводе С. А. Мальцевой, СПб., 2002, с. 557-590:

<sup>3</sup> Տե՛ս **Гегель**, Сочинения, т. VIII, М.; Л., 1955:

<sup>4</sup> Տե՛ս **Кареев Н. И.**, История Западной Европы в новое время в 7 томах, СПб., 1892-1917:

<sup>5</sup> Տե՛ս **Мечников Л. И.**, Цивилизация и великие исторические реки, М., 2013:

<sup>6</sup> Տե՛ս **Mousnier R.**, Les XVI<sup>e</sup> et XVII<sup>e</sup> siècles. Les progrès de la civilisation européenne et le déclin de l’Orient (1492-1715), Paris, 1954:

Ժամանակաշրջաններում են մուտք գործել նոր դարաշրջան: Բայց անկախ այն բանից, թե նոր ժամանակը որտեղ և երբ է սկզբնավորվել, անառարկելի է մի բան. պատմական այդ ժամանակաշրջանում տեղի է ունեցել նոր քաղաքակրթության, հարաբերությունների նոր համակարգի, եվրոպակենտրոն աշխարհի ծագում և եվրոպական քաղաքակրթության տարածում աշխարհի տարբեր կողմերում: Պատմական այս իրողությունից ելնելով է անհրաժեշտ դիտարկել «նոր ժամանակ» (նոր պատմության) հասկացությունը և դրա սկզբնավորումը:

Ժամանակակից պատմական գիտությունում այդ մասին միասնական մոտեցում չկա: Այսպես, ֆրանսիական պատմագիտությունում ամրագրված է այն կարծիքը, որ XVIII դարի ֆրանսիական հեղափոխությանը հաջորդած ժամանակաշրջանը պետք է համարել ժամանակակից պատմություն: Անգլիական պատմական գիտությունում մեր օրերում նոր ժամանակների պատմության վերաբերյալ գործածվում են հետևյալ եզրույթները՝ Modern history (նոր պատմություն), Contemporary history (ժամանակակից պատմություն) և Receny history (օրերս տեղի ունեցած պատմություն, վերջերս կատարված պատմություն): Ժամանակակից գերմանական պատմագիտությունում դա անվանում են պատմական ժամանակ (zeit geschichte):

Ժամանակակից պատմական գիտությունում նոր և նորագույն պատմության պարբերացման վերաբերյալ շրջանառվում է չորս հիմնական տեսություն՝ **մարքսիստական, քաղաքակրթությունների, տեխնոգեն քաղաքակրթությունների և աշխարհաքաղաքական**: Մարքսիստական պատմագիտությունը մարդկության ողջ պատմությունը ներկայացնում է հինգ կացութաձևերի տեսքով, իսկ համաշխարհային պատմության մեջ նոր ժամանակն անվանում է նոր պատմություն:

1920-ական թթ. խորհրդային պատմաբանները նոր ժամանակի սկիզբը համարում էին աշխարհագրական մեծ հայտնագործությունների, Ռեֆորմացիայի, XVI դարի Նիդերլանդական հեղափոխության և Լուսավորության դարաշրջանը: 1930-ական թթ. սկզբին Բ. Ֆ. Պորշենն առաջ քաշեց այն միտքը, որ 1917 թ. հոկտեմբերին հաջորդող ժամանակաշրջանը պետք է դիտարկել որպես նոր պատմության երրորդ փուլ կամ նորագույն պատմություն, որը հետագայում ամրապնդվեց պատմական գիտությունում: Նոր ժամանակի տևողության վերաբերյալ խորհրդային պատմաբանների բանավեճի արդյունքում ընդունելի դարձավ այն մոտեցումը, որ նոր պատմությունը պետք է բաժանել երկու փուլի. 1640-1871 թթ.՝ անգլիական հեղափոխությունից մինչև Փարիզի կոմունա, և 1871-1917 թթ.՝ Փարիզի կոմունայից մինչև հոկտեմբերյան հեղափոխություն: Այս իմաստով խորհրդային պատմագրությունում **մարքսիստական կացութաձևային մոտեցման** տեսանկյունից նոր և նորագույն պատմության պարբերացման վերաբերյալ ձևավորվեց հետևյալ մոտեցումը:

**Մինչև 1640 թ.**՝ միջին դարերի փուլ կամ ավատատիրական կացութաձևային դարաշրջան: **1640-1917 թթ.**՝ Նոր պատմության կամ կապիտալիստական

տական կացութեան դարաշրջան: **1917 թ. մինչ մեր օրերը**՝ նորագույն պատմություն կամ սոցիալիստական շինարարության և կապիտալիստական կացութեան համակարգի աստիճանական վերացման փուլ:

**Նորագույն պատմությունը** ենթարկվեց հետևյալ պարբերացմանը. **1917-1945 թթ.**՝ սոցիալիզմի կառուցում առանձին վերցրած մեկ երկրում՝ Խորհրդային Միությունում: **1945-1949 թթ.**՝ Երկրորդ աշխարհամարտի արդյունքում սոցիալիզմի համաշխարհային համակարգի ստեղծում: **1949-1991 թթ.**՝ գաղութային համակարգի կործանման և երրորդ աշխարհի երկրների ձևավորման ժամանակաշրջան: Սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզում:

Մարքսիստական կացութեանային տեսության ձևավորման ժամանակներից հետո պատմական գիտությունը զարգացել և հարստացել է լուրջ բացահայտումներով, նոր մոտեցումներով ու տեսություններով, որոնք նորովի են բացատրում մարդկության պատմության ընթացքն ու համաշխարհային պատմության պարբերացումը: Դրանցից մեկը **քաղաքակրթությունների տեսությունն** է, որը ձևավորվել է XX դարի կեսին՝ շնորհիվ Օ. Շպենգլերի, Ա. Թոյնբիի, Ֆ. Բրոդելի, Կ. Յասպերսի և ուրիշների աշխատությունների:

Համաշխարհային պատմության պարբերացումը քաղաքակրթություններով ներկայացնելու կողմնակիցները քաղաքակրթությունը համարում են միջոց, տարածաշրջանի կամ առանձին էթնոսի մարդկային մշակույթի զարգացման ձև: Քաղաքակրթության զարգացման աստիճանը պայմանավորված է ոչ թե սոցիալ-տնտեսական հանգամանքներով, այլ բարոյական և հոգևոր արժեքներով: Դրա առանցքը մարդն է իր աշխարհընկալմամբ, բարոյական ու գեղագիտական պատկերացումներով, հասարակության մեջ վարքագծի կանոններով և գործունեության բազմապիսի դրսևորումներով: Նիկոլայ Դանիլևսկին պատմական կյանքի իրական կրողներին անվանում է «պատմամշակութային տիպեր», որոնք թվով տասն են, և մերժում պատմության պարբերացումն ըստ փուլերի<sup>1</sup>: Նրա կարծիքով, «Գոյություն չունի համաշխարհային պատմություն, այլ միայն տվյալ քաղաքակրթությունների պատմություն, որն ունի անհատական փակ բնույթ»<sup>2</sup>:

Օավալդ Շպենգլերը պատմության պարբերացումը անտիկ աշխարհի, միջին դարերի և նոր ժամանակի համարում է «անհավանական թույլ և անիմաստ սխեմա», քանի որ եվրոպական հասարակությունների համար այս պարբերացումը չի գործում և որևէ նշանակություն չունի: Նա «Արևմտյան աշխարհի մայրամուտը» աշխատությունում<sup>3</sup> մարդկության պատմությունը բաժանում է միմյանցից անկախ մի քանի մշակույթների, որոնք ինքնատիպ և անկրկնելի են ու անցնում են ծագման, ծաղկման և անկման

<sup>1</sup> Տե՛ս **Балуев Б. П.**, Споры о судьбах России: Н. Я. Данилевский и его книга «Россия и Европа», М., 1999:

<sup>2</sup> Տե՛ս **Данилевский Н. Я.**, Россия и Европа, М., 1991:

<sup>3</sup> Տե՛ս **Spengler O.**, Der Untergang des Abendlandes, Bd. 1, 1918, Bd. 2, 1922:

փուլեր: Նրա կարծիքով, քաղաքակրթությունը «ցանկացած մշակույթի պատմության զարգացման որոշակի ավարտական փուլն է»<sup>1</sup>:

Կարլ Յասպերսը համաշխարհային պատմությունում առանձնացնում է չորս կարևորագույն փուլ՝ նախապատմություն, անտիկ մեծ մշակույթների, առանցքային և գիտատեխնիկական դարաշրջաններ, որոնք համարում է «փաստացի իրականություն ժամանակի մեջ»<sup>2</sup>: Անդրադառնալով պատմության ընդհանրության գաղափարին՝ նա գրում է. «Պատմությունն իր ամբողջության մեջ ընկալվում է որպես աշխարհի տարբեր պատկերների հաջորդական փոփոխություն. կա մ դեպի մշտական վատթարացում, կա մ որպես շրջապտույտ կամ վերելք: Դա պարզ առաջընթացի զարգացման փուլը չէ: Դա միաժամանակ կործանման և արարման ժամանակ է»<sup>3</sup>:

Առնոլդ Թոյնբիի կարծիքով, «Պատմության բաժանումը «անտիկ» և «ժամանակակից» փաստում է անցումը հելլենական պատմությունից դեպի արևմտյանը, մինչդեռ բաժանումը «միջնադարի» և «ժամանակակից» պատմության վերաբերում է արևմտյան պատմության մի գլխից մյուսին անցմանը: Չհետապնդելով հեռահար նպատակներ՝ նշենք, որ «հին+միջնադար+նոր» պատմության պայմանական բանաձևը ոչ միայն նույնական չէ, այլև անճիշտ է»<sup>4</sup>: Նա պատմության անընդհատության գաղափարը համարում է ամենահրապուրիչը բոլոր հայեցակետերի թվում, բայց միաժամանակ գտնում է, որ այն ունի միայն խորհրդանշական մտահայեցական կերպար: Համաշխարհային պատմությունը նա ներկայացնում է 21 տեղային (լոկալ) և մոտ 10 լիովին ինքնուրույն քաղաքակրթությունների տեսքով, որոնք կազմում են «պատմության միասնական ծառի» առանձին ճյուղեր<sup>5</sup>:

Ֆերնան Բրոդելը «պատմական ժամանակ» հասկացությունը դիտարկում է կարճ, միջին տևողության և փուլային ժամանակի մակարդակով<sup>6</sup>: Նա առաջ է քաշում այն միտքը, որ յուրաքանչյուր աշխարհ-տնտեսություն զբաղեցնում է որոշակի աշխարհագրական տարածք, ունի իր կենտրոնը, միջին գոտի և ծայրամասեր, որոնք ժամանակ առ ժամանակ կարող են փոփոխության ենթարկվել<sup>7</sup>:

Քաղաքակրթությունների տեսությունը համաշխարհային պատմության պարբերացումը ներկայացնում է միմյանց հաջորդող հետևյալ փուլերով՝ ծագում, զարգացում, ծաղկում և անկում: Ժամանակակից գիտությունում

---

<sup>1</sup> Տե՛ս Սпенգլեր Օ., *Закат Европы*, пер. с нем., М., 1993:

<sup>2</sup> Jaspers K., *Die geistige Situation der Zeit*, Berlin-Leipzig, 1932, S. 15.

<sup>3</sup> Ясперс К., *Смысл и назначение истории*, пер. с нем., М., 1991, с. 36.

<sup>4</sup> Тойнби А., *Исследование истории в 3-х томах*, пер. с англ., вступ. статья и комментарии К.Я. Кожурина, СПб., 2006.

<sup>5</sup> Տե՛ս Тоунбее А. J., *A Study of History- Abridgement* by D. Somervell, London, New York, Toronto, 1946, p. 19:

<sup>6</sup> Տե՛ս Бродель Ф., *Материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIII вв.*, пер. с фр., т. 1. *Структуры повседневности: возможное и невозможное*, М., 1986:

<sup>7</sup> Տե՛ս Бродель Ф., *Динамика капитализма*, пер. с фр., Смоленск, 1993:

շրջանառվում է քաղաքակրթությունների երկու տեսություն՝ փուլային զարգացման և տեղային (լոկալ): Փուլային տեսությունը համաշխարհային պատմությունը դիտարկում է անտիկ, միջնադարյան, նոր ժամանակի և ինդուստրիալ քաղաքակրթությունների տեսքով: Տեղային քաղաքակրթություններն իրենց տեսակի մեջ ինքնուրույն միավոր են, կազմում են պատմության ընդհանուր հոսքի մաս, կարող են համապատասխանել պետությունների սահմանների հետ կամ ներառել մի քանի պետություններ (օրինակ՝ արևմտաեվրոպական, ամերիկյան, ասիական և այլն)<sup>1</sup>:

**Քաղաքակրթությունների կամ կենսական փուլերի տեսությունը** նոր ժամանակը և ժամանակակից պատմությունը ներկայացնում է հետևյալ պարբերացմամբ.

- **XV-XVI դարեր**՝ ինդուստրիալ քաղաքակրթության տարրերի սաղմնավորում միջնադարյան ավանդական քաղաքակրթության համակարգի ծաղկման և ճգնաժամի փուլում:
- **XVI-XIX դարեր**՝ միջնադարյան ավանդական քաղաքակրթության մարում և ինդուստրիալ քաղաքակրթության համակարգի զարգացում:
- **XIX դարի 70-80-ական թթ.** – **XX դարի 20-ական թթ.**՝ իմպերիալիզմի փուլ: Ինդուստրիալ քաղաքակրթության համակարգի ծաղկում – ճգնաժամ և հետինդուստրիալ քաղաքակրթության տարրերի առաջացում:
- **XX դարի 30-70-կան թթ.**՝ «պետական բարեկեցության» փուլ, որի ժամանակ ինդուստրիալ հասարակությունը մարում է, և նրա բազիսի վրա զարգանում է հետինդուստրիալ հասարակությունը:
- **XX դարի 80-90-ական թթ.**՝ հետինդուստրիալ քաղաքակրթության համակարգի ծաղկման և ճգնաժամի փուլ: Տեղեկատվական ու բարձր տեխնոլոգիաների քաղաքակրթության տարրերի ձևավորվում:

**Տեխնոգենային տեսությունը** ձևավորվել է XX դարի կեսերին արևմտաեվրոպական պատմական ու քաղաքական գիտություններում: Տեխնոգենային քաղաքակրթությունն իրենից ներկայացնում է արևմտյան քաղաքակրթության զարգացման պատմական փուլ, որը ձևավորվել է XV-XVII դարերում Եվրոպայում և տարածվել ամբողջ աշխարհում ընդհուպ XX դարի վերջը: Այս տեսության կողմնակիցները ներկայացնում են հասարակության տնտեսական առաջընթացի վերաբերյալ մի քանի մոտեցումներ և շեշտը դնում են նյութական բազայի, գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացման վրա:

Ամերիկյան տնտեսագետ Ուոլթ Ռոսթոուն «Տնտեսական աճի փուլերը» աշխատությունում, հակադրվելով պատմության կացութաձևային տեսությանը, մարդկության պատմությունը բաժանում է տնտեսական աճի հետևյալ հինգ փուլերի.

---

<sup>1</sup> Ст' у Цивилизация и исторический процесс, М., 1983; Цивилизационный подход к истории: проблемы и перспективы развития, Воронеж, 1994:

1. «Ավանդական հասարակություն», որին բնորոշ է գյուղատնտեսության պարզունակ և գիտության ու տեխնիկայի «նախանյութային» մակարդակը:
2. «Անցումային հասարակություն», արդյունաբերական առաջընթացի ապահովման համար նախնական պայմանների ստեղծման ժամանակաշրջան:
3. «Առաջընթացի փուլ» կամ արդյունաբերական հեղափոխություն: Կապիտալի կուտակման աճի բարձրացում և առաջատար արդյունաբերական ոլորտների արագ զարգացում:
4. «Հասունության փուլ», կապիտալ ներդրումների աճ, ազգային եկամուտի ավելացում, նախկինում անհայտ արդյունաբերական նոր ոլորտների ստեղծում:
5. «Ձանգվածային բարձր սպառման դարաշրջան»: Այս փուլում հասարակության կենտրոնում հայտնվում են բնակչության սպառման և բարեկեցության խնդիրները<sup>1</sup>:

XX դարի 50-70-ական թթ. Արևմուտքում լայն տարածում գտած «ինդուստրիալ հասարակության» տեսության կողմնակիցներից Ռայմոն Արոնը սոցիալական առաջընթացը դիտարկում է որպես անցում նախկին հետամնաց «ավանդական հասարակությունից» դեպի առավել զարգացած ինդուստրիալ հասարակություն: Նրա կարծիքով, մարդկությունը գնում է դեպի «միասնական ինդուստրիալ հասարակություն», որն ընդունակ է ապահովել անսահման առաջադիմական զարգացում<sup>2</sup>: 1970-ական թթ. ձևավորված «հետինդուստրիալ հասարակության» տեսության հիմնադիր Դենիել Բելլի կարծիքով՝ մարդկության պատմության զարգացումն ընթանում է նախաինդուստրիալ, ինդուստրիալ և հետինդուստրիալ հասարակությունների տեսքով, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ են յուրահատուկ ձևի սոցիալական հաստատություններ<sup>3</sup>:

Զբիգնև Բժեզինսկին հետինդուստրիալ հասարակությունը որակում է որպես նոր տեխնոտրոն հասարակություն, որը հենվում է գերազանցապես կիբեռնետիկայի և ռադիոէլեկտրոնիկայի նվաճումների վրա և ապահովում աննախադեպ առաջընթաց սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում<sup>4</sup>:

Ալվին Թոֆֆլերը համաշխարհային պատմության պարբերացումը կատարում է այսպես կոչված երրորդ ալիքի տեսության համաձայն: Նա ագրարային քաղաքակրթության ժամանակաշրջանը համարում է առաջին ալիք, որին նոր ժամանակի արշալույսին փոխարինում է ինդուստրիալ քաղաքա-

<sup>1</sup> Տե՛ս **Rostow W. W.**, The Stages of Economic Growth. A Non-Communist Manifesto, Cambridge, 1960:

<sup>2</sup> Տե՛ս **Aron R.**, Lectures on Industrial Society, London, 1968, p. 167:

<sup>3</sup> Տե՛ս **Белл Д.**, Грядущее постиндустриальное общество, пер. с англ. М., 1999:

<sup>4</sup> **Bzzezinsky Z.**, Between two Ages: America's Role in the Technetronic Era, New York, 1970, p. 9-10.

կրթությունը կամ երկրորդ ակիբը: XX դարի վերջին հասարակության զարգացումը թևակոխում է երրորդ փուլ՝ տիեզերական դար, տեղեկատվական կամ էլեկտրոնային դարաշրջան, կամ «գերինդուստրիալ հասարակություն»<sup>1</sup>: Ջոն Նեյսբիթի կարծիքով՝ 1956-1957 թթ. ինդուստրիալ դարաշրջանի վերջն են: Նա հետինդուստրիալ հասարակությունը անվանում է «տեղեկատվական հասարակություն», որի հիմքում ընկած են բարձր տեխնոլոգիաները, գիտության և տեխնիկայի որակական նորացումը<sup>2</sup>: Յոշիտա Մասուդան «Տեղեկատվական հասարակությունը որպես հետինդուստրիալ հասարակություն» աշխատությունում ժամանակակից հասարակության հիմքը համարում է համակարգչային տեխնոլոգիան, իսկ XXI դարը՝ «համակարգչաուտոպիական դար»:

**Տեխնոգենային քաղաքակրթության տեսությունը** համաշխարհային պատմության պարբերացման վերաբերյալ դրսևորում է հետևյալ մոտեցումը.

- **XV-XVI դարեր**՝ տնտեսական կացութաձևի և սեփականության ձևի ավանդական հավասարակշռության ձևափոխման ժամանակաշրջան, նոր տնտեսության ի հայտ գալու, տնտեսական նոր հոգեբանության, կուտակման և շահույթի ոգու դարաշրջան:
- **XVII-XVIII դարեր**՝ մանուֆակտուրային կապիտալիզմի ժամանակաշրջան:
- **XVIII դարի վերջ – XIX դարի սկիզբ**՝ Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրներում արդյունաբերական հեղաշրջման ժամանակաշրջան:
- **XIX դարի 20-70/80-ական թթ.**՝ քաղաքային ֆաբրիկա-գործարանային կապիտալիզմի դարաշրջան:
- **XIX դարի 70-80-ական թթ. – XX դարի 20-ական թթ.**՝ մենաշնորհային կապիտալիզմի դարաշրջան:
- **XX դարի 30-70-ական թթ.**՝ պետական մենաշնորհային կապիտալիզմի դարաշրջան:
- **XX դարի 80-90-ական թթ.**՝ տեղեկատվական տնտեսական համակարգի ձևավորման ժամանակաշրջան:

XIX դարի վերջին – XX դարի սկզբին ձևավորված **աշխարհաքաղաքական տեսությունը** համաշխարհային պատմությունը պարբերացնում է գիտական շրջանառության մեջ դնելով ավանդական աշխարհաքաղաքականություն, նոր աշխարհաքաղաքականություն (կամ աշխարհատնտեսություն) և նորագույն աշխարհաքաղաքականություն (կամ աշխարհափիլիսոփայություն) եզրույթները<sup>3</sup>:

**Ավանդական աշխարհաքաղաքականությունը** համաշխարհային պատ-

<sup>1</sup> Տե՛ս **Toffler A.**, The third Wave, New York, 1980, p. 25:

<sup>2</sup> Տե՛ս **Naisbitt G.**, Megatrends: Ten New Directions transforming our Lives, New York, 1982, p. 13:

<sup>3</sup> Տե՛ս **Дергачев В. А.**, Геополитика, М., 2004:



մության ընկալման հարցում շեշտը դնում է պետությունների ռազմաքաղաքական ուժի վրա, կարևորում աշխարհագրական գործոնի գերիշխող դերը օտար տարածքների նվաճման գործում, որը պետության «աշխարհագրական բանականությունը» է: **Նոր աշխարհաքաղաքականությունը** կամ աշխարհատնտեսությունը կարևորում է պետության տնտեսական հզորությունը, իսկ **նորագույն աշխարհաքաղաքականության տեսանկյունից** վճռորոշը ոչ թե ռազմական և տնտեսական հզորությունն է, այլ ոգու ուժը միջազգային հարաբերություններում:

Ավանդական աշխարհաքաղաքականության տեսության հիմնադիրներից Ֆրիդրիխ Ռաստելը «Պետությունների տարածական աճի օրենքների մասին» աշխատությունում ներկայացնում է զավթախուժման յոթ տեսակ, որի հաշվին ընդարձակված և ուժեղացած պետությունները ձեռք են բերում ազդեցիկ դիրք քաղաքական գործընթացներում: Նրա կարծիքով, քանի որ «տարածականության զգացումն» ամերիկացիների մոտ եվրոպացիների և մյուսների համեմատությամբ առավել զարգացած է ու Նոր աշխարհում նրանք զիտակցաբար իրականացրին այն, ինչ եվրոպացիներն անում էին կռահողաբար և աստիճանաբար, ուստի ԱՄՆ-ը կդառնա նախ մայրցամաքային, ապա «համաշխարհային տերություն» (Weltmacht):

«Ծովը ժողովուրդների հզորության աղբյուր» գրքում Ֆ. Ռաստելն առաջ է քաշում այն միտքը, որ միայն ծով և ռազմածովային ուժեր ունեցող երկրները կարող են հասնել համաշխարհային լիարժեք զավթողականության<sup>1</sup>:

Աշխարհաքաղաքականությունն եզրույթն առաջինն օգտագործած Ռուդոլֆ Չելլենը «Պետությունը որպես կյանքի ձև» աշխատությունում Առաջին համաշխարհային պատերազմը մեկնաբանում է որպես բնական աշխարհաքաղաքական հակամարտություն, որը ծագեց հարաշարժուն զավթողականության ձգտող Գերմանիայի («Առանցքի երկրների») և նրան հակադրված եվրոպական ծայրամասային Անտանտայի միջև<sup>2</sup>: Ֆրիդրիխ Նաումանը «Միջին Եվրոպա» գրքում գրում է, որ պատմությունը և համաշխարհային աշխարհաքաղաքականությունը կերտում են մեծ տերությունները, իսկ մարդկությունը դեռևս չի հասունացել այն բանի համար, որ միավորվի համաշխարհային պետության մեջ<sup>3</sup>:

Հելֆորդ Մաքքինդերը «Պատմության աշխարհագրական առանցքը» հոդվածում աշխարհի կենտրոնը համարում է եվրասիական մայրցամաքը: Վերջինիս կենտրոնում գտնվում է «աշխարհի միջուկը» կամ heartland-ը<sup>4</sup>, որն

<sup>1</sup> Տե՛ս **Дугин А.**, Основы геополитики, М., 1997:

<sup>2</sup> Տե՛ս **Колосов В. А., Мироненко Н. С.**, Геополитика и политическая география, М., 2001:

<sup>3</sup> Տե՛ս **Исаев Б. А.**, Геополитика, СПб., 2007, с. 47-61:

<sup>4</sup> Heartland – անգլերեն՝ heart-սիրտ և land-երկիր բառերից, որը Հ. Մաքքինդերն օգտագործում է նկատի ունենալով աշխարհի կենտրոնը, միջուկը: Նրա նկարագրած տարածքը համընկնում է ԽՍՀՄ-ի և Մոնղոլիայի պետական սահմանների հետ:

իրենից ներկայացնում է առանցքային տարածք Համաշխարհային կղզիների՝ Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի սահմաններում: Նա համաշխարհային աշխարհաքաղաքականության պատմությունը բաժանում է երեք փուլի՝ նախակոլումբոսյան, կոլումբոսյան և հետկոլումբոսյան դարաշրջանների<sup>1</sup>:

Նիքոլաս Մփիքսենի կարծիքով՝ համաշխարհային քաղաքականության տարածքային կենտրոնը ոչ թե Heartland-ն է, այլ Rimland-ը<sup>2</sup>, որն ընդգրկում է Heartland-ը արևմուտքից, հարավից և հարավ-արևելքից<sup>3</sup>: Ալֆրեդ Մեհենի տեսությամբ՝ ծովային հզորությունը քաղաքակրթության հատուկ տեսակ է, որի լավագույն օրինակը հին աշխարհում Կարթագենն էր, XVII-XIX դարերում՝ Անգլիան, իսկ ժամանակակից աշխարհում՝ Միացյալ Նահանգները, որը սկզբում ամերիկյան մայրցամաքում կիրականացնի ռազմական ինտեգրում, այնուհետև կհասնի համաշխարհային տիրապետության<sup>4</sup>: Կարլ Հաուսհոֆերի մշակած «Մայրցամաքային դաշինքի» դոկտրինան աշխարհաքաղաքականությունում հայտնի է որպես «կողմնորոշում դեպի Արևելք», որի անդամներ Գերմանիան, Ռուսաստանը և Ճապոնիան պետք է հաստատեն «Նոր Եվրասիական կարգ»:

XX դարի երկրորդ կեսում աշխարհաքաղաքականության քննարկման առարկա դարձան քաղաքական ռազմավարության այնպիսի երևույթներ ու հասկացություններ, ինչպիսիք են սառը պատերազմը, ռազմավարական հավասարակշռությունը: Ավելի ուշ շրջանառության մեջ մտան գլոբալիզացիա, միաբնեռ աշխարհ, գերտերություն, մեծ, տարածաշրջանային, ատոմային, տիեզերական, տնտեսական, սպորտային տերություններ հասկացությունները:

Մեր օրերում Արևմուտքի պատմական և քաղաքական մտքում ձևավորվել են նոր տեսություններ, մասնավորապես՝ ատլանտիզմի (Դոնալդ Սայնինգ, Հենրի Բիսինջեր), նեոատլանտիզմի (Սեմուել Հանթինգթոն), մոնդիալիզմի (Ժակ Աթթալի, Կարլո Սանտորո), նեոմոնդիալիզմի (Ֆրենսիս Ֆուկույամա) և այլն: Սրանք ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում կարևորում են Եվրամիության ստեղծումը, ԽՍՀՄ փլուզումը, ԱՄՆ-ի գլխավորությամբ միաբնեռ աշխարհի ձևավորումը և այլ հարցեր:

**Աշխարհաքաղաքական հայեցակետը** համաշխարհային պատմությունը ենթարկում է հետևյալ պարբերացմանը.

- **XV դարի վերջ – XVI դար**՝ աշխարհագրական մեծ հայտնագործությունների և առաջին գաղութային տերությունների ժամանակաշրջան, երբ Պորտուգալիայի և Իսպանիայի նման պետություններն

---

<sup>1</sup> Տե՛ս **Mackinder H. J.**, The Geographical Pivot of History // Democratic Ideals and Reality, Washington, 1996, p. 175-194:

<sup>2</sup> Rimland - անգլերեն՝ rim-աղեղ և land-երկիր բառերից:

<sup>3</sup> Տե՛ս **Spykman N.**, The Geography of the Peace, New York, 1944:

<sup>4</sup> Տե՛ս **Горшков С. Г.**, Морская мощь государства, М., 1979:

ունեին ոչ թե վաղ բուրժուական, այլ ռազմաավատատիրական բնույթ:

- **XVI դարի վերջ – XVII դար**՝ եվրոպական գերիշխանության համար պայքարի ծավալում Իսպանիայի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև: 1648 թ. Վեստֆալյան հաշտությունը եվրոպական մայրցամաքում աշխարհաքաղաքական կարգի հաստատման երաշխավոր:
- **XVIII դար-XIX դարի սկիզբ**՝ բուրժուական գաղութային նվաճման ծավալման ժամանակաշրջան: Եվրաստլանտյան քաղաքակրթության տարածության ուրվագծի ձևավորում: 1815 թ. Վիեննայի վեհաժողովը եվրոպական մայրցամաքում աշխարհաքաղաքական նոր կարգի հաստատման երաշխավոր:
- **XIX դարի կեսեր**՝ եվրոպական գաղութային կայսրության ձևավորում և միջազգային հարաբերությունների համակարգի զարգացում: Վիեննայի վեհաժողովից մինչև 1856 թ. Փարիզի հաշտություն: Մեծ տերությունների տիրապետության ժամանակաշրջան:
- **XIX դարի կեսեր – XX դարի սկիզբ**՝ ինպերիալիզմի դարաշրջան: Աշխարհի գաղութային բաժանման ավարտը և վերաբաժանման սկիզբը: Պայքար ազդեցության գոտիների վերաբաժանման համար: Եվրոպական քաղաքակրթությունում խմբավորումների դարաշրջան: Առաջին համաշխարհային պատերազմ:
- **1918-1945 թթ.**՝ աշխարհի քաղաքական քարտեզի վերակառուցում Վերսալ-Վաշինգտոնյան միջազգային համակարգի սահմաններում: Միջազգային հանրության իրավական կառուցվածքի ձևավորման ժամանակաշրջան: Ազգերի լիզայի ստեղծում:
- **1945-1991 թթ.**՝ երկրներ միջազգային համակարգի ձևավորում: Մոնիալիզմի համաշխարհային համակարգի ստեղծում: «Սառը պատերազմ»: ՄԱԿ-ի ստեղծում:
- **1991 թ.**՝ երկրներ միջազգային համակարգի փլուզում:

Նոր ժամանակի և ժամանակակից պատմության պարբերացման վերաբերյալ վերը նշված չորս տեսությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանցից միայն մարքսիստական կացութաձևային տեսությունն է նոր ժամանակի սկիզբը համարում XVII դարի անգլիական հեղափոխությունը: Մյուս երեք տեսությունները միջնադարի, նոր և ժամանակակից պատմությունների ժամանակագրական սահմանները չեն պայմանավորում մեկ իրադարձությամբ և սկզբունքային նշանակություն տալիս են բացառապես համաշխարհային պատմության այդ փուլերի իմաստային մեկնաբանությանը: Դրանք նոր ժամանակի սկիզբը համարում են XV-XVI դարերը:

Նոր ժամանակի պարբերացումը XVII դարի անգլիական հեղափոխությամբ ներկայացնելու մոտեցումը մերժում են ոչ միայն վերը նշված տեսությունները, այլև անգլիական պատմական գիտությունը, որի ոչ բոլոր ուղղություններն են 1640-1660 թթ. իրադարձությունները գնահատում հեղափո-

խություն: Սովորաբար Անգլիայի պատմությունում հեղափոխություն անվանում են միայն 1688 թ. դեպքերը՝ Ջոն Լոքի բնութագրմամբ անվանելով այն «փառավոր» կամ «պանծալի» հեղափոխություն: Դեռևս XVII դարում անգլիական պատմագիտության պահպանողական ուղղության ներկայացուցիչ Էդուարդ Հայդը (կոմս Կլարենդոն) «Խռովության և քաղաքացիական պատերազմի պատմությունն Անգլիայում» գրքում<sup>1</sup>, իսկ XVIII դարում փիլիսոփա Դեյվիդ Հյումը «Անգլիայի պատմություն» աշխատությունում<sup>2</sup> 1640-1660 թթ. անգլիական իրադարձություններն անվանում էին «մեծ խռովություն» և «քաղաքացիական պատերազմ»: XIX դարի ճանաչված պատմաբան Սեմուել Հարդիները տեղի ունեցած հակամարտությունն անվանում էր պուրիտանական հեղափոխություն և քաղաքացիական մեծ պատերազմ:

XX դարի անգլիական պատմագիտությունում Ջ. Մեդիմենը՝ «Չարլզ Առաջինի դատավարությունը», Ջ. Քլարկը՝ «Անգլիայի պատմություն», Ս. Ջեմսոնը՝ «Ուրախ Անգլիայի անկումը», Հ. Դեյսը՝ «Վաղ Սթյուարտները (1603-1660)» աշխատություններում հեղափոխություն եզրույթն առհասարակ չէին օգտագործում և XVII դարի իրադարձությունները նույնպես անվանում էին «մեծ խռովություն»:

XVIII-XIX դարերի լիբերալ ուղղության ներկայացուցիչներ Էդմունդ Բոթթը «Ստորումներ ֆրանսիական հեղափոխության մասին», Հենրի Հալլամը «Սահմանադրական կարգն Անգլիայում», Թոմաս Մաքուլեյը «Միլթոն», Սեմուել Հարդիները «Քաղաքացիական մեծ պատերազմի պատմությունը» աշխատություններում գտնում էին, որ Անգլիայում 1640-ական թթ. ընթացել է քաղաքացիական պատերազմ: XX դարում լիբերալ դպրոցի երևելի դեմքերից Ջորջ Թրենյանը, Լյուիս Նեմիրը, Հերբերթ Բաթթերֆիլդը իրենց աշխատություններում, XVII դարի առաջին կեսում ընթացած քաղաքացիական պատերազմից բացի, կարևորում էին սահմանադրական և կրոնական ազատությունների համար պայքարը: XX դարում լիբերալ պատմաբաններ Մարգարեթ Ջեյմսը «Սոցիալական հիմնախնդիրներն ու քաղաքականությունը 1640-1660 թթ. պուրիտանական հեղափոխության ժամանակաշրջանում» աշխատությունում, Թոմաս Մաքուլեյը, Չարլզ Ֆերսը և ուրիշներ XVII դարի անգլիական իրադարձություններն անվանում էին պուրիտանական հեղափոխություն: Լեյբոռիստական պատմագրության ներկայացուցիչներ Սիդնեյ և Բեաթրիսա Վեբբ ամուսինները, Ջոն Քոուլը, Ռիչարդ Թոունին նույնպես չեն ընդունում Անգլիայում հեղափոխության գաղափարը:

Անգլիական պատմագրությունում միայն XX դարում առաջին անգամ մարքսիստական դպրոցի ներկայացուցիչները 1640-1660 թթ. իրադարձություններն անվանեցին հեղափոխություն: Արթուր Մորթոնի կարծիքով՝ Անգ-

<sup>1</sup> Տե՛ս **Clarendon E. H.**, History of the Rebellion and Civil Wars in England, Oxford, 1826:

<sup>2</sup> Տե՛ս **Hume D.**, The History of England, from the Invasion of Julius Caesar to the Revolution in 1688, London, 1789:

լիայում «քաղաքացիական պատերազմն ուներ դասակարգային, կրոնական և հեղափոխական բնույթ»<sup>1</sup>: Քրիստոֆեր Հիլը «1640 թ. անգլիական հեղափոխությունը» գրքում XVII դարի առաջին կեսի քաղաքացիական պատերազմը համարում է «դասակարգային պատերազմ» և «քաղաքական, տնտեսական ու կրոնական իշխանության համար պայքար», սոցիալական հեղափոխություն ու «հասարակական մեծ շարժում, ինչպիսին 1789 թ. ֆրանսիական հեղափոխությունն էր»<sup>2</sup>: Այս գնահատականն անգլիական պատմագրությունում չամրապնդվեց:

Ժամանակակից բրիտանական պատմաբաններ Քեննեթ Մորգանը, Ջեյմսի Բլեքը, Նորման Դեյսը, Օստին Վուլրիչը, Չարլզ Քարլթոնը և ուրիշներ իրենց աշխատություններում<sup>3</sup> XVII դարի առաջին կեսի իրադարձություններում առհասարակ հեղափոխություն չեն տեսնում և տեղի ունեցած հակամարտությունը ներկայացնում են որպես քաղաքացիական երեք պատերազմ: Այս գնահատականն արդարացված է ամենից առաջ նրանով, որ 1640-ական թթ. անգլիական խորհրդարանի պայքարը թագավորի դեմ նպատակ էր հետապնդում սահմանափակել բացարձակ միապետությունը, հաստատել սահմանադրական կարգ և ապահովել կրոնական ազատություններ: Այդ պայքարը գլխավորում էր ոչ թե բուրժուազիան, այլ նոր ազնվականությունը: Ընթանում էր թեկուզ թույլ ու ոչ ազդեցիկ նշանակություն ունեցող, բայց և այնպես ազգամիջյան պայքար անգլիացիների, շոտլանդացիների և իռլանդացիների միջև: Եվ վերջապես, որն ամենակարևորն է, անգլիական ներքաղաքական պայքարը դուրս չեկավ երկրի շրջանակներից, չտարածվեց Եվրոպայում և ազդեցություն չունեցավ ո՛չ Եվրոպայի քաղաքական, տնտեսական, սոցիալական ու հոգևոր կյանքի զարգացման, ո՛չ էլ համաշխարհային պատմության ընթացքի վրա: Ավելին, այն մարդկության պատմության մեջ նոր փուլ չբացեց և նոր դարաշրջանի սկիզբ չդրեց:

Համաշխարհային պատմության մեջ «նոր ժամանակ» հասկացությունը բնութագրական և ընդունելի է ինչպես Արևմտյան Եվրոպայի, այնպես էլ Ասիայի և Աֆրիկայի երկրների համար: Բնականաբար այս մայրցամաքներում պատմական նոր փուլի կամ դարաշրջանի բովանդակությունը տարբեր էր և միանման լինել չէր կարող: Արևմտյան Եվրոպայի երկրները տնտեսապես ավելի զարգացած էին, որտեղ հաստատվեցին բուրժուական հարաբերություններ: Ասիայի և Աֆրիկայի երկրները պատմական այդ ժամանակաշրջանում թևակոխել էին ավատատիրական ճգնաժամի երկարատև փուլ, իսկ աշխարհագրական հայտնագործություններից հետո դարձան զարգա-

<sup>1</sup> St' u **Morton A.**, A Peoples History of England, London, 1937:

<sup>2</sup> **Hill K.**, The English Revolution 1640, London, 1941, p. 9.

<sup>3</sup> St' u **Морган К.**, История Великобритании пер. с англ., М., 1984, **Блэк Д.**, История Британских островов, пер. с англ., М., 1996, **Дэвис Н.**, История Европы, пер. с англ., М., 1996, **Carlton Ch.**, The Experience of the British Civil Wars, London, 1992, Going to the wars: The Experience of the British civil wars. 1631-1651, London, 1995:

ցած եվրոպական երկրների զավթողական քաղաքականության թեթև օբյեկտ: Այդուհանդերձ, համաշխարհային պատմության մեջ նոր ժամանակի սկզբնավորման հարցում գոյություն ունի որոշակի ընդհանրություն ինչպես Արևմուտքի, այնպես էլ Արևելքի երկրների համար: Ընդհանուր առմամբ դա գաղութային համակարգի ձևավորումն է, որի շրջանակներում Արևմուտքի մի խումբ երկրներ և Արևելքի կախյալ երկրների ճնշող մեծամասնությունը մարդկության պատմության մեջ առաջին անգամ կազմեցին միասնական համաշխարհային տնտեսություն ձևավորվող միասնական համաշխարհային տնտեսական շուկայի հենքի վրա: Այս մոտեցումն ընդունված է արևմտյան պատմական գիտությունում, որը նոր ժամանակի միասնական պատմական տարածության սկզբնավորումը համարում է աշխարհագրական մեծ հայտնագործությունների, կապիտալի նախնական կուտակման, Վերածննդի և Ռեֆորմացիայի ազդեցության տակ ավանդական սոցիոմշակութային միջավայրի կերպարանափոխության դարաշրջանը, քանզի աշխարհն էապես փոխվեց, տեղի ունեցան տնտեսական, քաղաքական, սոցիոմշակութային հսկայական առաջընթաց ու նոր զարգացումներ:

Ժամանակակից ռուսական պատմագրությունում և վերջերս լույս տեսած Եվրոպայի և Ամերիկայի երկրների նոր պատմության դասագրքերում<sup>1</sup> համաշխարհային պատմության նոր ժամանակի սկիզբը ներկայացվում է XV-XVI դարերով: Նոր ժամանակի ավարտը արևմտյան պատմագիտությունը համարում է XIX-XX դարերի սահմանաբաժանը՝ մոնոպոլիստական կապիտալիզմի կամ իմպերիալիզմի դարաշրջանը: Այս դարերը նույնպես շրջադարձային են ինչպես Եվրոպայի, այնպես էլ աշխարհի մյուս երկրների համար: Այս ժամանակաշրջանում կայացան իմպերիալիստական առաջին հակամարտությունները՝ 1898 թ. իսպանա-ամերիկյան, 1899-1902 թթ. անգլո-բուրական և 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմները, որոնք դարձան ապագա Առաջին աշխարհամարտի նախատիպերը: Ժամանակակից եվրոպական, ռուսական և հայ պատմագիտությունները հատկապես Առաջին աշխարհամարտի ավարտն են համարում նոր և նորագույն պատմությունների սահմանաբաժանը: Եթե այլոց համար դա 1918 թ. նոյեմբերն է, ապա հայ պատմագիտության համար 1918 թ. մայիսը՝ Հայաստանի Հանրապետության հռչակումը:

Անվիճելի է, որ հայոց պատմությունը համաշխարհային պատմության բաղկացուցիչ մասերից մեկն է: Հետևաբար նրա պարբերացումը պետք է համահունչ լինի համաշխարհային պատմության այն պարբերացմանը, որն ընդունված է ժամանակակից արևմտյան պատմագիտությունում: Այս իմաստով հայոց պատմության նոր ժամանակի սկիզբն անհրաժեշտ է վերանայել և

---

<sup>1</sup> Сѣ ѵ Пономарев М. В., Смирнов С.Ю., Новая и новейшая история стран Европы и Америки, ч. 1, М., 2000, Новая история стран Европы и Америки XVI-XIX века, ч. 1, под ред. А. М. Родриге-са, М. В. Пономарева, М., 2005, Новая история стран Европы и Америки, под ред. И. М. Кривогуза, М., 2005:

դիտարկել XV-XVI դարերով, թեպետ աշխարհագրական հայտնագործությունները և Ռեֆորմացիան մեր պատմության հետ անմիջական առնչություններ չեն ունեցել: Մեր պատմության XV-XVI դարերի առանցքային իրադարձությունները կարելի է համապատասխանեցնել համաշխարհային պատմության տվյալ ժամանակաշրջանի իրենց նշանակությամբ դարակազմիկ դեպքերին: Մասնավորապես, XV դարի հայոց պատմության նշանակալից անցքերից մեկը պետք է համարել հայոց թագավորության վերականգնման փորձը 1465 թ. սկզբներին, երբ Սմբատ Արծրունի-Սեֆեդիյանը հանդիսավորությամբ օծվեց թագավոր: Ճիշտ է, նրա թագավորությունը կարճ տևեց և «ավելի շատ հոգեբանական ու ազգային ինքնագիտակցության արժեք ուներ, քան պետական որևէ իմաստ»<sup>1</sup>, այնուամենայնիվ մեզանում նոր ժամանակի ձևավորման, նոր մտածողության ու գործելակերպի սկիզբ էր: XVI դարի սկզբի համար հայոց նոր պատմության արժանահիշատակ ու մեծագույն կարևորություն ունեցող իրադարձություններից մեկը 1512 թ. հայկական տպագրության սկզբնավորումն էր: Մեր կարծիքով, հայոց նոր պատմության (նոր ժամանակի) սկզբնավորման առաջնահերթ իրադարձությունը ոչ թե XVII դարում՝ 1677 թ. կայացած Էջմիածնի գաղտնի խորհրդածողովն էր, ինչպես գտնում են «Հայոց պատմություն» ակադեմիական հրատարակության երրորդ հատորի հեղինակները<sup>2</sup>, այլ XVI դարի՝ 1547 թ. Էջմիածնի ժողովը: Դրան հաջորդած ժամանակաշրջանում եվրոպական միապետերին հայոց կաթողիկոսների հղած հինգ «Աղերսագրերն» ու նրանց բանակցությունները Հայաստանի ազատագրման վերաբերյալ, և այդ գործընթացի շուրջ 40 տարվա տևողությունը հիմք է տալիս պնդելու, որ գործ ունենք ձևավորված գաղափարի հետ: Հետևաբար, եթե մեզ համար ընդունելի է հայոց պատմության նոր ժամանակի սկզբնավորումը համարել հայ ազատագրական պայքարի ձևավորումն ու այդ ուղղությամբ ձեռնարկված առաջին քայլերը, ապա դա պետք է դիտարկել XVI և ոչ թե XVII դարում: Այս մտտեցումը հնարավորություն կտա հայոց նոր ժամանակի պատմությունը հիմնովին համապատասխանեցնել համաշխարհային պատմության նույն ժամանակաշրջանի հետ:

**Феликс Мовсисян – Периодизация новой и новейшей истории  
в современной исторической науке**

В западной исторической науке нет единого подхода в периодизации истории Нового времени и современной истории. В XVI-XVII вв. итальянские гуманисты впервые разделили мировую историю на три больших периода: античный, средневековый, новый. В XVII веке началом Нового времени считалось падение Константинополя в 1453 г. По Г. Гегелю, Новое время в Европе начинается с Реформации. Дореволюционная русская либеральная историография началом Нового времени считает Гуманизм и Реформа-

<sup>1</sup> Հայոց պատմություն, խմբ. պրոֆ. Հր. Ռ. Միմոնյանի, Երևան, 2012, էջ 139:

<sup>2</sup> Հայոց պատմություն, հ. III, գ. առաջին, Վ. Բարխուդարյան և ուրիշներ, Երևան, 2010, էջ 3:

цию, а концом – Первую мировую войну. В западной историографии XIX века началом Нового времени принято было считать великие географические открытия. В XX веке свое согласие с этим подходом выразили представители французской исторической школы «Анналы». Начиная с XIX века до наших дней этой концепции придерживаются прежде всего в Соединенных Штатах Америки и в странах Латинской Америки. В современной немецкой исторической науке для восприятия новой истории используется понятие «историческое время». В английской историографии рассматриваются понятия «новая история», «современная история» и «история повседневности». В современной исторической науке в вопросе периодизации Новой и новейшей истории рассматриваются четыре основные теории – марксистская, цивилизационная, техногенная и геополитическая. Марксистская теория формирования новой истории относит к английской буржуазной революции XVII века. Остальные три теории началом новой истории считают XV-XVI века – особенно великие географические открытия, Гуманизм и Реформацию, которые в корне изменили географическую, экономическую, культурную и духовную картину Европы. Этот подход стал приемлемым и в современной российской историографии. Точно так и в армянской истории следует считать XV-XVI вв. началом Нового времени. В этот период в жизни армянского народа произошли такие важнейшие события, как попытка восстановления Армянского царства в 1465 г., возникновение армянского книгопечатания в 1512 г. и тайный собор в Эчмиадзине в 1547 г., где было заложено начало формирования идеи освобождения Армении.

**Felix Movsisyan – *The Periodization of Modern and Contemporary History in Modern Historical Science***

There is no single approach to the new and the newest period or the new time and periodization of modern history according to the Western Historical Science. In the XV-XVI centuries Italian humanists were the first to divide the World History into three main periods – Ancient, Middle and Modern. In the XVII century the fall of Constantinople in 1453 was considered to be the new beginning of the New Time. According to G. Hegel, the New Time in Europe started with the Reformation. The Pre Revolutionary Russian Liberation Historiography considered Humanism and Reformation as the start of the New Time and the First World War outbreak as the end of it. In the XIX century the greatest geographic discoveries were considered to be the start of the New Time. In the XX century the representatives of French historical school “Annals” approved that approach. Since the XIX century this position has been held especially in the United States, as well as in the countries of Latin America. Nowadays, in German Historiography the concept “historical time” is used for the new history. In British Historiography the concepts of New History, Modern History and Recent history are being used. In Modern Historical Science there exist four main theories on New and Modern History – Marxist, Civilizational, Technogenic and World political. According to the Marxist Theory the beginning of New History is considered to be the XVII Century English Bourgeois Revolution. The other theories observe the XV-XVII centuries as the start of New History, especially the greatest geographic discoveries, Humanism and Reformation, which radically changed the world-political, economic, cultural and spiritual image of Europe. This very approach was approved by Modern Russian Historiography. The XV-XVI centuries should also be observed as the start of the new period of Armenian History, when lots of significant events took place in the life of the Armenian people, such as the attempt to re-establish the Armenian Kingdom in 1465, the start of the Armenian Printing in 1512, as well as the Echmiatsin Secret Summit in 1547, which initiated the idea of liberation of Armenia.